ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ամուրա ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/142 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	մանկական խաղահրապարակների սարքեր	Վանդալակայուն, բացօթյա օգտագործման համար նախատեսված թենիսի սեղանների արտադրություն և տեղադրում: 4. Տեխնիկական պահանջներ 4.1 Ընդհանուր պահանջներ Թենիսի սեղանը պետք է լինի վանդալակայուն և նախատեսված բացօթյա օգտագործման համար: Սեղանը պետք է լինի դիմացկուն՝ • UV ճառագայթման նկատմամբ • ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ • քամու ազդեցության նկատմամբ • մարդկանց ազդեցության նկատմամբ • խոնավության նկատմամբ Մակերեսների մշակումը պետք է բացառի ժանգի առաջացումը: Ուժեղացված ծանր մետաղական շրջանակը և անկերային ամրացումը պետք է կանխեն սեղանի հնարավոր շրջվելը քամու կամ մարդկանց կողմից: 4.2 Չափեր Սեղանի չափերը պետք է համապատասխանեն միջազգային ստանդարտին՝ • երկարություն - 2.74 մ • լայնություն - 1.525 մ • բարձրություն - 0.76 մ 4.3 Նյութեր Սեղանի մակերես՝ HPL պլաստիկ, հաստություն՝ 14–16 մմ Կողային մասեր և ցանց՝ պողպատ, հաստություն՝ 4 մմ 4.4 Շրջանակ Սեղանի շրջանակը պետք է կազմված լինի՝ • պողպատե պրոֆիլ 40×60×3 մմ՝ ամբողջ պարագծով • 2–3 լայնական ամրացնող պրոֆիլ՝ 40×20×2.5 մմ Կողային պատերը պետք է ամրացվեն շրջանակին: Սեղանի մակերեսը պետք է ամրացվի շրջանակին պտուտակներով՝ պտուտակահանումից պաշտպանությամբ: Սեղանի արտաքին մասում ոչ մի պտուտակ

		տեսանելի չպետք է լինի: Մետաղական տարրերի եռակցումը պետք է իրականացվի ներսից: 4.5 Ներկում Պողպատե տարրերը պետք է ներկվեն փոշեներկով: • ներկի հաստություն՝ ոչ պակաս քան 80 մկմ • մակերես՝ մատե Գույնը՝ Կապույտ 2 Պալիտրա՝RAL Effect 610-6 Սեղանի գծանշումը պետք է լինի սպիտակ գույնով: Գծանշման լայնությունը՝ • պարագծով - 20 մմ • կենտրոնական գիծ - 3 մմ 4.6 Սեղանի մակերես Սեղանի մակերեսը պետք է լինի արտաքին օգտագործման համար նախատեսված մատե HPL սալիկ: Պլաստիկի գույնը՝ Կապույտ 2՝ ըստ նախագծի: Եթե նշված գույնը հասանելի չէ, անհրաժեշտ է ընտրել արտադրողի պալիտրայից նախագծին հնարավորինս մոտ գույն և համաձայնեցնել նախագծի հեղինակների հետ: Սեղանի մակերեսի եզրերը և բոլոր անցքերը պետք է պարտադիր փակված կամ հերմետիկացված լինեն պլաստիկ կամ պողպատե ներդիրներով: Քանի որ HPL նյութը արևի ազդեցությամբ լայնանում է, միացման հատվածներում պետք է նախատեսվեն 2–3 մմ բացեր, որպեսզի սեղանի մակերեսը չդեֆորմացվի արևի ազդեցությունից: Սեղանի մակերեսը գնդակի հարվածից չպետք է ուժեղ աղմուկ առաջացնի: 4.7 Տեղադրում Սեղանները պետք է տեղադրվեն առանց անիվների: Ամրացումը պետք է իրականացվի անկերային պտուտակներով՝ պողպատե անկյունակների միջոցով՝ յուրաքանչյուր կողմից 4 կետում: Անկյունակների չափերը՝ 80×80 մմ կամ 100×100 մմ Անկյունակների հաստությունը՝ 6–8 մմ Անկյունակները պետք է եռակցվեն կողային պատին ներսից: Տեղադրման ժամանակ պետք է ապահովել, որ • սեղանը կանգնի հարթ • չշարժվի • խաղային մակերեսը լինի խիստ հորիզոնական Ապրանքը պետք է մատուցվի նախատեսված ծավալներին համապատասխան, պետք է լինի համաձայն կից ներկայացվող լուսանկարում, ինչպես նաև տեխնիկական բնութագրում ներկայացված տեսակի, բնութագրի, չափսերի, լինի չօգտագործված: Օգտագործված բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Փոխադրումը և տեղադրումը կատարվում է մատակարարի կողմից: Երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս: Անվտանգության և համապատասխանության հավաստագրերը արտադրողի կնիքով պետք է ներկայացվեն ապրանքը առաքելիս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Амура ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЄՔ-ԷՍՃՍՊՁՐ-26/142 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
5		